

ըլլաք անոնց եւ օգնէք իրենց պէտքերու եւ կարիքներու մէջ եւ այն բանակցութեան ժամանակ, զոր պիտի մշակեն վերոյիշեալ Մովսէս արքեպիսկոպոսի հետ ի մասին այն նիւթերու, որոնք յանձնարարուած են անոնց նորին Սրբութեան կողմէն, յանուն որոյ եւ վերոյիշեալ Ս. Ժողովոյ Տարածման Հաւատոյ կ'ընծայեմ զիս Ձեզ եւ կը ցանկամ Ձեզ աստուածային շնորհքը» :

1633 տարին ձախորդ տարի մ'եղաւ Միւթեան համար :

Լեհահայոց դատին պատճառաւ պղտորած էին Հայոց տրամադրութիւնները : 1631ին արդէն կը սպառնար Մովսէս. «Թէ Փափէն ձար մի եղաւ, որ զչարն խափանեց, բարի ապա թէ չէ՝ մեղքն իւրեանց վիզն. մեք այլ զմեր գիտցածն կ'անեմք» (տե՛ս էջ 278) :

Մովսէս կաթողիկոսի թուղթը, գրուած Լեհահայոց խնդիրներու մասին առ Ուրբանոս Ը., հաղիւ 1633 Օգոստոսին Հռոմ հասաւ, ուստի անոր մահէն երեք ամիս ետքը : Հաւանորէն Քահանայապետին 1632 Նոյեմբեր 22ին գրած Համառօտագիրն ալ, զոր յանձն առած էր տանիլ Յովհ. Թադէոս Սպահանի նորընտիր եպիսկոպոսը, չժամանեց կաթողիկոսին ձեռքը. ծերունի եպիսկոպոսը ճանապարհին կամ Սպահան հասնելէն քիչ յետոյ կը վախճանի²². Իր մահուամբ ապարդիւն պիտի մնային այն յանձնարարութիւնները, զորոնք

²² Prop. Lettere volgari, an. 1633, vol. 13, f. 117. Մահը պատահած է 1633 Սեպտեմբեր 19էն յառաջ :